# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

**«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի միջև 2025թ. հուլիսի 10-ին կնքված N ՀՏԶՀ-ԱՏԵԽ-ԽԲՄ-ԾՁԲ-2025/7 ծածկագրով տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

**ք. Երևան** **«09» ապրիլ 2026թ.**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Առաքելյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա,** մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ Կողմեր, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1869-Ն որոշման առաջին կետի երկրորդ ենթակետի պահանջները, ՀՏԶՀ Ծրագրերի իրականացման և վերահսկողության վարչության զեկուցագիրը և **2025թ. հուլիսի 10-ին կնքված «ՀՀ Սյունիքի մարզի «Անգեղակոթի ԲԱ» ՊՈԱԿ-ի կառուցում» ծրագրերի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների պետական գնման N ՀՏԶՀ-ԱՏԵԽ-ԽԲՄ-ԾՁԲ-2025/7** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.5 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի 4-րդ «**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**» բաժնի 4.1-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **9,448,019.00 (ինը միլիոն չորս հարյուր քառասունութ հազար տասնինը)** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, որից **3,688,019.00** (երեք միլիոն վեց հարյուր ութսունութ հազար տասնինը) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է տեղակապվող մասի շինարարական աշխատանքների **ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների** արժեքը:

2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը:
3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:
4. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ | «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 | Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, Ք. Սիսիան, Ա. Մանուկյան 15 |
| ՀՎՀՀ՝ 00846441 | ՀՎՀՀ՝ 09809552 |
| Հ/Հ՝ 900011058857 | Հ/Հ՝ 1150002922490100 |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկ՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| Գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյան | Տնօրեն Արման Առաքելյան |
| ------------------------------ /ստորագրություն/ | ------------------------------ /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |